ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊՈՂՈՍՅԱՆ ՍՈՆԱ ՀՐԱՅՐԻ

ՍՏԵՂՇԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԵՌԱՀԱՍԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԺԹ. 00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	հոգեբանական գիտությունների թեկնածու **Էլդա Աշոտի ԳՐԻՆ**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	հոգեբանական գիտությունների դոկտոր **Սրբուհի Ռաֆիկի ԳԵՎՈՐԳՅԱՆ**
	հոգեբանական գիտությունների թեկնածու **Ռուբեն Հակոբի ՊՈՂՈՍՅԱՆ**
Առաջատար կազմակերպություն՝	Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015թ.-ի սեպտեմբերի 29-ին՝ ժամը 12:00-ին, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի փիլիսոփայության և հոգեբանության թիվ 064 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 29.08.2015թ.-ին:

Փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Կ. Ե. Վարդանյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Գիտության, տեխնիկայի այս արագընթաց զարգացման դարաշրջանում հույժ կարևորվում է օժտվածության հիմնահարցը, քանզի կյանքի տարբեր ոլորտների անխուսափելի խնդիրները մարտահրավերներ են նետում անձի ինտելեկտուալ և ստեղծագործական ներուժին: Օժտվածության հիմնահարցն արդիական է ինչպես հոգեբանական գիտության, այնպես էլ հասարակության համար ամբողջությամբ, ինչն ասել կուզի, որ արվեստի ձեռքբերումները, ազգային տնտեսության մրցունակությունը ուղղակի կապված են օժտվածներին ժամանակին բացահայտելու և նրանց զարգացման համար լավագույն պայմաններ ստեղծելու հետ: Հասարակությունը, բնականաբար, գիտակցել է օժտված անձանց՝ մարդկային քաղաքակրթության ներուժ լինելը, այդ իսկ պատճառով նրանց ուսումնասիրումը դարձել է հեռանկարային գիտական ուղղություններից մեկը:

Այսօր էլ խնդրո առարկան դարձել է ժամանակի հրամայականը, ուստի մենք ևս խիստ կարևորում ենք օժտվածների որոնումը և դաստիարակումը՝ հաշվի առնելով նրանց՝ հասարակության գլխավոր հարստություն լինելը: Օժտվածության հիմնախնդիրը կարող է ունենալ պետական նշանակություն (այդպես է Ռուսաստանում, Ճապոնիայում): Հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ընթացող փոփոխությունները սուր խնդիրներ են դրել հատկապես կրթական համակարգի առջև, խնդիրներ, որոնց լուծումից է կախված երկրի մշակութային ներուժի պահպանման և կրկնապատկման հնարավորությունը: Այսօր բոլորս էլ ականատես ենք գլխապտույտ արագությամբ կատարվող փոփոխությունների, նորանոր հայտնագործությունների և նվաճումների: Բավական է ասել, որ զարգացման ժամանակակից փուլում օժտվածների ուսուցման և դաստիարակության լավագույն պայմանների ստեղծումը դիտարկվում է որպես կրթության հիմնական ռազմավարական խնդիր. այն այսօր աշխարհում պետական լայնածավալ ծրագրերի առարկա է: Առաջադրված հիմնահարցի արդիականությունն այն է, որ անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել դեռահասների օժտվածության բացահայտմանը, նրանց ստեղծագործական ներուժի իրագործման համար լավագույն պայմանների ստեղծմանը, ինչը հնարավոր է իրականացնել համակարգված և ամբողջական ազդեցությամբ, որտեղ երեխա, ծնող, ուսուցիչ, պետություն համագործակցությունն ամուր հիմքերի վրա է դրված:

Հաշվի առնելով վերոհիշյալը, ինչպես նաև կարևորելով խնդրի արդիականությունը՝ առանձնացնում ենք երկու հանգամանք՝

- արդի ժամանակների յուրահատկությունը,
- օժտվածների՝ հասարակությանը հարմարվելու անհրաժեշտությունը:

Ժամանակակից սոցիալական միջավայրի անորոշությունը պահանջում է ոչ միայն մարդու ակտիվություն, այլև ստեղծագործական մտածողություն և ոչ ստանդարտ վարք: Եվ քանի որ կրեատիվությունն աշխարհում տիրող նորարարությունների հիմքերի հիմքն է, ուստի մենք ևս, կարևորելով դրա նշանակությունը, այն առավելապես հրատապ ենք համարում մեր հանրապետության համար, որը չունի հզոր տնտեսություն, և որտեղ առկա է մտավոր ներուժի արտահոսք: Մինչդեռ մեր այսօրվա ստեղծագործ հասարակության ստեղծումը վաղվա նվաճումների երաշխիքն է, լավագույն գրավականը: Ազգի

ստեղծագործական ներուժի առավելագույն կիրառումը օժտվածության խնդիրը դարձնում է բացառիկ արդիական, որի լուծումը թույլ կտա թե' ժամանակին հայտնաբերել, թե' լիարժեք աջակցություն ցուցաբերել օժտված անձանց: Երիցս ճշմարիտ են Կ. Ռոջերսի հետևյալ խոսքերը, որ եթե ժամանակակից հասարակության մեջ մենք չունենանք մարդիկ, ովքեր կառուցողական կարծագանքեն ընդհանուր զարգացման ամենափոքր փոփոխություններին, մենք կարող ենք մեռնել, և դա կլինի այն գինը, որը կվճարենք ստեղծարարության բացակայության համար:

Այդ իսկ պատճառով կարևոր է, որ աճող սերունդը ծանոթանա արդի ձեռքբերումներին, զինվի և յուրացնի հասկացություններ, որոնք կնպաստեն ապագայի նորարարություններին: Հարկավ, նրա կրեատիվ ներուժը մարդկության խնդիրները լուծելու համար է, հետագա սերունդների համար շրջապատող աշխարհը կառուցելու նախադրյալ, որտեղ նրանք կարող են ապրել ու արարել:

Անդրադառնալով օժտվածների՝ հասարակությանը հարմարվելու անհրաժեշտությանը՝ նկատենք՝ նրանց բացահայտումն արդիական է ոչ միայն մեր երկրի ստեղծագործական և մտավոր ներուժը լինելու, այլև սովորական երեխաների հետ շփվելու անհարմարությունը վերացնելու համար: Օժտվածությունն իր զարգացման ընթացքում ենթարկվում է մի շարք վտանգների, որոնցից մեկը ոչ միայն ստեղծագործական ներուժի չկիրառված լինելն է, այլև մարելը միջին աշակերտին միտված կրթական համակարգում: Ըստ Կ. Յունգի՝ օժտվածությունը բացարձակ արժեք չէ, բայց այդպիսին դառնում է միայն այն դեպքում, եթե անձը համաքայլ է իր օժտվածությանն այնքանով, որ նրա տաղանդը կարող է օգտակար կիրառություն ունենալ: Ստեղծագործական ներուժը, ցավոք, նույն հաջողությամբ կարող է ապակառուցողական լինել: Այդ իսկ պատճառով օժտվածությունը ոչ միայն հասարակության առջև ծառացած հարցերից մեկն է, այլև այն դարձել է անձնային խնդիր, այն է՝ ինչպես օգնել օժտված դեռահասին՝ դրսևորելու իր ստեղծարարությունը և միաժամանակ հարմարվելու հասարակությանը՝ հաշվի առնելով նրա առանձնահատկությունները: Կարևոր է բաց չթողնել պահը և օգնել անձին՝ հաղթահարելու դժվարությունները, պահպանելու և զարգացնելու օժտվածությունը:

Քննարկվող հիմնախնդիրը, լինելով ընդհանուր հոգեբանության ուսումնասիրության տիրույթում, առավել կարևորվում է դեռահասության տարիքի համար, քանզի կրեատիվության զարգացումը առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում հենց այս տարիքում: Պատահական չէ, որ մի շարք հետազոտություններում ցույց է տրված, որ դեռահասության տարիքը զբաղեցնում է անձի կրեատիվության զարգացման մեջ հիմնական տեղը՝ որպես սեփական անհատականության գիտակցման շրջան (Լ. Բոժովիչ, Դ. Էլկոնին, Ա. Լեոնտև): Դրանով հանդերձ՝ մշտապես փոփոխվող պայմաններում նրանց հարմարման գործընթացը բարդ և ցավագին ձևով է ընթանում. ավելի շատ ընդլայնվում է դեզադապտացիայի (ապահարմարման) ոլորտը: Ժամանակակից դպրոցի առջև մեկ այլ համատեքստով նորից արդիական է կյանքի տարբեր փուլերում երեխայի օժտվածության և ստեղծարարության զարգացման նորանոր պայմաններ և միջոցներ որոնելու խնդիրը: Հատկապես այն կարևորություն է ստանում դեռահասների ստեղծագործական ներուժի զարգացման դեպքում: Այս առումով Դ. Ի. Ֆելդշտայնը գտնում է, որ մեր իրականությունը սկզբունքորեն նոր հիմքերի վրա իրապես փոխելը տրված է

նրանց, ովքեր այսօր գտնվում են դեռահասության տարիքում: Միանշանակ է, որ օժտված դեռահասների նկատմամբ այսօրվա հոգածությամբ է պայմանավորվում վաղվա գիտության, մշակույթի և սոցիալական ոլորտի զարգացումը: Դրա հետ կապված՝ հոգեբանական գիտության գլխավոր խնդիրներից է հենց այդ 10-15 տարեկանների ներուժի, հնարավորությունների, պայմանների, միջոցների զարգացումը, ովքեր էլ կձևավորեն, կկառուցեն հասարակության ապագան, այնինչ, ընդգծենք, օժտված դեռահասների ուսումնասիրություն մեր երկրում գրեթե չի անցկացվել, ավելին, օժտված անձի հարմարման համալիր հետազոտություն չի իրականացվել, ինչի հետ կապված՝ օժտված անձանց հանդեպ հոգեբանական աջակցություն կազմակերպելու հարցը մնում է չլուծված, իսկ օժտված դեռահասների հարմարման առանձնահատկությունները դառնում են գերարդիական:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Չնայած իր արդիականությանն ու հրատապությանը՝ մինչ օրս չկան օժտվածության բացահայտման հստակ և կոնկրետ մեթոդներ: Դեռ ավելին, երկար ժամանակ օժտվածության խնդիրը հանգեցվել է ինտելեկտին և կրեատիվությանը, ինչն էլ նպաստել է շատ մոտեցումների ձևավորմանը՝ հոգեֆիզիոլոգիական (Ա. Լեբեդև, Ռ. Ստերնբերգ), հոգեգենետիկ (Ֆ. Գալտոն), հոգեչափական (Ա. Բինե. Հ. Այզենկ, Դ. Վեքսլեր, Ի. Կետտել, Զ. Ռավեն, Լ. Տերմեն), ընդհանուր հոգեբանական (Զ.Գիլֆորդ, Է.դե Բոնո, Ա. Օսբորն, Լ. Վիգոտսկի, Ա. Բրուշլինսկի, Ս. Ռուբինշտեյն): Սակայն հարկ է նշել, որ 20-րդ դարի երկրորդ կեսին հոգեբանության մեջ սկսում է գերակշռել այն մոտեցումը, ըստ որի՝ օժտվածությունն անձի ինտեգրալ և դինամիկ զարգացող որակ է, որը չի հանգեցվում միայն ինտելեկտին, կրեատիվությանը կամ կոգնիտիվ գործառույթներին: Այն՝ որպես անձի ինտեգրալ որակ, չունի հաստատուն բնութագիր, զարգանում և ենթարկվում է էվոլյուցիայի ողջ կյանքի ընթացքում: Այս հեղինակների աշխատանքներում (Յու. Բաբաևա, Դ. Բոգոյավլենսկայա, Վ. Դրուժինին, Ն. Լեյտես, Ա. Բրուշլինսկի, Ա. Մատյուշկին, Զ. Ռենզուլլի, Է. Տորրանս, Կ. Հելլեր, Մ. Խոլոդնայա, Վ, Շադրիկով, Ն. Շումակովա, Վ. Յուրկևիչ, Ա. Սավենկով) հատուկ ընդգծվում է օժտվածության դինամիկ բնութագիրը:

Ժամանակակից հոգեբանության կարևոր դրույթն այն է, որ օժտվածության զարգացումը չի կարող դիտարկվել ձևավորվող անձի՝ սոցիալական միջավայրի փոխազդեցությունից դուրս: Օժտվածության միջավայրային պատճառականության (դետերմինացիայի) խնդիրն այսօր ամենասուրն է: Այդ փոխազդեցությունները ներկայացված են ինչպես հայրենական, այնպես էլ արևմտյան հեղինակների մոդելներում (Ֆ. Մոնակա, Ա. Սավենկով, Կ.Հելլեր, Լ. Լարիոնովա, Կ. Տեկեկս, Մ. Կարնե, Է. Լանդաու, Ն. Շումակովա): Փաստենք՝ մոդելների ողջ բազմազանությամբ հեղինակները միակարծիք են մոտակա սոցիալական միջավայրի (ընտանիք, դպրոցական միջավայր, հասակակիցներ) կարևոր դերը ընդունելու հարցում: Իսկ շատ հոգեբաններ էլ ընդգծում են նաև ներքին գործոնների (անձնային առանձնահատկություններ, անձի «ես» կոնցեպցիա) նշանակությունը, որոնք ազդում են ներուժի զարգացման և իրագործման վրա: Միևնույն ժամանակ կան շատ տվյալներ, որոնք վկայում են ուսումնական գործընթացում օժտված դեռահասների մոտ հոգեբանական դժվարությունների մասին (Բ. Գ. Անանև, Լ . Ի. Բոժովիչ, Ն. Բ. Շումակովա, Ս. Մաքսիմովա,Ն. Բ. Կուզմինա, Ա. Ա. Լոսևա, Ա. Մ. Մատյուշկին, Լ. Ֆ. Օբուխովա, Վ. Ա. Պետրովսկի, Յ. Ա. Պոնոմարև, Տ. Վ. Պրոկոֆև, Մ. Ա. Խոլոդնայա, Կ. Հելլեր): Այդ իսկ պատճառով էլ ուսուցումը

դպրոցում առանցքային է ինչպես ստեղծարարության ձևավորման, այնպես էլ ադապտացիայի հնարավորությունների համար: Ուսումնասիրվող հիմնահարցը, ըստ ամենայնի, արդիական է ինչպես ընդհանուր հոգեբանության, այնպես էլ մյուս բնագավառային ոլորտների տեսակետից՝ մասնավորապես տարիքային, սոցիալական: Սկզբունքորեն հենց այդ միտքն է արտահայտել Տ. Լյուբարտը՝ նշելով, որ կրեատիվության ուսումնասիրության գործընթացում իրենց ներդրումն ունեն հոգեբանության այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են փորձարարականը, տարիքայինը, սոցիալականը և բժշկականը: Անկասկած է, որ կրեատիվության ուսումնասիրումը նպաստում է հոգեբանության միավորմանը մետատեսական մակարդակում:

Հանրագումարի բերելով՝ ընդգծենք՝ վերոհիշյալ հանգամանքով է պայմանավորված սույն հիմնախնդրի՝ որպես ատենախոսության թեմայի ընտրությունն ու արդիականությունը:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել օժտվածության դրսևորման ընդհանուր օրինաչափություններն ու անհատական առանձնահատկությունները և դեռահասության տարիքում դրանց անդրադարձը հարմարման գործընթացի վրա:

Ելնելով նպատակից՝ ածանցվել են հետևյալ **խնդիրները՝**

1.Վերլուծել կրեատիվությունը՝ որպես օժտվածության չափանիշ, և դրա դրսևորման հոգեբանական օրինաչափությունները:

2.Բացահայտել հանրահայտ մարդկանց կենսագործունեության ընթացքում կրեատիվության և հարմարման կապը:

3.Բացահայտել օժտված դեռահասներին՝ ուսումնասիրելով նրանց կրեատիվությունը, ինտելեկտը, անձնային բնութագրերը:

4.Ուսումնասիրել օժտված դեռահասների դպրոցական ադապտացիան, տագնապայնությունը, ինչպես նաև շփման և վարքային առանձնահատկությունները (աշակերտ-ուսուցիչ):

5.Բացահայտել ու վերլուծել դեռահասների օժտվածության դրսևորման օրինաչափությունները և կապը հարմարման հնարավորությունների հետ:

Հետազոտության վարկածը: Օժտվածությունը, ունենալով միանման օրինաչափություններ տարբեր անձանց մոտ, անկրկնելի է անձնային դրսևորումներում, որի գլխավոր չափանիշներից է կրեատիվությունը, ինչն առանձնացնում է անձը միջավայրից, որն իր հերթին անդրադառնում է սոցիալ-հոգեբանական հարմարման մեխանիզմների վրա՝ առավել տարաբնույթ հիմնախնդիրներ առաջադրելով դեռահասության տարիքում:

Հետազոտության օբյեկտը անձի օժտվածության առանձնահատկությունների բնութագիրն է:

Հետազոտության առարկան օժտվածությունն է և նրա այնպիսի դրսևորումը, ինչպիսին կրեատիվությունն է՝ որպես հարմարման կարևորագույն գործընթաց դեռահասների մոտ:

Մեթոդաբանական և տեսական հիմքերը: Ատենախոսության հիմքում ընկած են անձի զարգացման հոգեբանական հայեցակարգերը (Ս. Լ. Ռուբինշտեյն, Ա. Պ. Բոժովիչ, Դ. Ի. Ֆելդշտայն), օժտվածության կայացման (Դ. Բ. Բոգոյավլենսկայա, Ա. Մ. Մատյուշկին, Վ. Ն.Դրուժինին), անձնային առանձնահատկությունների (Գ. Բուրմենսկայա, Վ. Սլուցկայա, Կ. Կարնե, Կ. Տեկեկս, Վ. Յուրկևիչ), ստեղծարարության (Ջ. Գիլֆորդի և Է. Տորրենսի, Ֆ. Վիլյամսի) հայեցակարգերը, ինչպես նաև Կ. Յունգի մոտեցումը: Ատենախոսության հիմքում ընկած է Ջ. Գիլֆորդի հայեցակարգը, ըստ որի՝

դպրոցական տարիների վերջում շատ օժտվածներ երբեմն ծանր դեպրեսիայի մեջ են ընկնում, ստիպված են թաքցնել իրենց օժտվածությունը հասակակիցներից և մեծերից, նրանք դպրոցում զգում են «խտրականություն» չտարբերակված ուսուցման, դպրոցի՝ միջին աշակերտին միտված լինելու պատճառով: Ինչպես նաև է. Լանդաուի այն հայեցակարգը, ըստ որի՝ կրեատիվությունը յուրաքանչյուր դաստիարակության և հոգեթերապիայի նպատակն է, այն հակառակ է հարմարմանը և ենթադրում է համընդհանուրի մերժում: Ներառված են նաև Մ. Վոլլախի և Ն. Կոգանի մոտեցումները ինտելեկտի ու կրեատիվության կապի, ինչպես նաև արտաքին պայմաններին հարմարվելու, կյանքի հիմնախնդիրները լուծելու տարբերության վերաբերյալ:

Աշխատանքում կիրառվել են հետազոտության հետևյալ մեթոդները՝ հիմնահարցի փիլիսոփայական և հոգեբանական աղբյուրների վերլուծություն,

դպրոցական փաստաթղթերի ուսումնասիրում, զրույց, դիտում, կենսագրական մեթոդ, փորձագիտական հարցման մեթոդ: Հոգեբանական թեստավորման մեթոդիկաներ՝ դեռահասների համար նախատեսված Ջ. Ռավենի պրոգրեսիվ մատրիցաները, է. Տորրենսի ստեղծագործական մտածողության, Կ. Թովմասի միջանձնային փոխհարաբերությունների, Բ. Ֆիլիպսի դպրոցական տագնապայնության, Ֆ. Վիլյամսի դիվերգենտ մտածողության, ինչպես նաև ծնողների և ուսուցիչների կողմից երեխաների ստեղծագործական սկզբի գնահատման թեստերը, «անձի ստեղծագործական բնութագրերի ինքնագնահատում»՝ բաղկացած 50 հարցերից, որոնք թույլ են տալիս բացահայտել դեռահասների հետաքրքրասիրությունը, երևակայությունը, ինչպես նաև ռիսկի գնալու ընդունակությունը:

Աշխատանքի գիտական նորույթը:

- Դիտարկելով օժտվածությունը՝ որպես անձի ինտեգրալ որակ՝ առանձնացվել են դրա բացահայտման չափանիշները՝ ինտելեկտ, կրեատիվություն, անձնային առանձնահատկություններ:
- Բացահայտվել են կրեատիվ օժտված դեռահասները և ուսումնասիրվել հարմարման առանձնահատկությունները այն միջավայրում, որտեղ ընթանում էր նրանց զարգացումը՝ սրանով իսկ կարևորելով դրա նկատմամբ ինչպես գիտական հոգածությունը, այնպես էլ բազմակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությունը:
- Պարզվել է, որ դեռահասների մոտ օժտվածության գլխավոր չափանիշի՝ կրեատիվության բարձր մակարդակը խոչընդոտներ է ստեղծում նրանց հարմարման գործընթացում:
- Բացահայտվել է օժտվածության դրսևորման օրինաչափությունների միևնույն նկարագիրը ինչպես անցյալ, այնպես էլ ներկա ժամանակների օժտված անձանց մոտ:
- Համակարգվել են օժտված դեռահասներին բնորոշ առանձնահատկությունները և ուսումնական գործընթացում ուղեկցող խնդիրները, որոնց ժամանակին դիտարկելը թույլ կտա հեռացնել օժտվածության զարգացումը խոչընդոտող գործոնները և հնարավորինս լավագույն պայմաններ ստեղծել դրա դրսևորման համար:
- Նախանշվել են ուսումնական գործընթացում օժտված դեռահասներին բացահայտելու և նրանց հետ աշխատող ուսուցիչներին օժտվածության մասին գիտելիքներով զինելու ուղիները:

Տեսական նշանակությունը: Հիմնահարցի հետազոտության տվյալների վերլուծության արդյունքում բացահայտված տեսական դրույթները, եզրահանգումները կհամալրեն օժտվածության, ստեղծարարության դրսևորման օրինաչափություններին վերաբերող համապատասխան մոտեցումները և հայեցակարգերը, ինչն էլ կարող է կիրառվել կրթական հաստատություններում՝ օժտված անձանց բացահայտելու և աջակցելու համար:

Կիրառական նշանակությունը: Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ հանրակրթական դպրոցներում օժտված դեռահասներին հայտնաբերելու համար կարելի է կիրառել օժտվածության բացահայտման առանձնացված չափանիշները և մեթոդները՝ որպես մեթոդական փաթեթ: Բացի այդ, սովորող օժտված դեռահասների հարմարման խնդիրների ուսումնասիրության արդյունքների կիրառումը հնարավորություն կտա ուսուցման գործընթացում ստեղծել բարենպաստ պայմաններ նրանց համակողմանի և ներդաշնակ զարգացման համար: Հարմարման առանձնահատկությունների, դժվարությունների փորձարարական տվյալները, որոնք ծագում են ուսուցիչ-աշակերտ փոխազդեցության գործընթացում, կարող են կիրառվել դպրոցներում հոգեբանական ծառայություն իրականացնելիս: Օժտվածների ուսուցման նոր և ձևափոխված (մոդիֆիկացված) մեթոդիկաների ստեղծումը, մանկավարժական կադրերի որակավորման բարձրացումը առավել կբարելավեն ուսուցիչների, հոգեբանների՝ դեռահասների հետ կատարվող աշխատանքի որակը: Ստացված արդյունքները թույլ կտան նաև իրականացնել կանխարգելիչ և կանխորոշիչ աշխատանքներ:

Պաշտպանության ներկայացվող դրույթները՝

1. Օժտվածությունն այսօր էլ մասսայական բնույթ չի կրում. այն շատ հաճախ չի դրսևորվում դեռահասի ուսումնական գործունեության ընթացքում, քանի որ ենթադրում է ինքնատիպություն, յուրօրինակություն, նորը ասելու համարձակություն:

2. Հանրահայտ մարդկանց կենսագրությունները վկայում են նրանց՝ ուսումնական գործընթացում հարմարման խնդիրներ ունենալու հանգամանքը:

3. Որոշ ուսուցիչներ ունեն ոչ համարժեք պատկերացում օժտվածների մասին, ինչի արդյունքում նման դեռահասները մնում են աննկատ, նրանց ստեղծագործական ակտիվությունն ընկալվում է ոչ պատշաճ ձևով, որի հետևանքով կա'մ մարում է, կա'մ ձեռք բերում հակասոցիալական բնույթ:

4.Դեռահասների մոտ ինտելեկտի և կրեատիվության փոխհարաբերակցությունն անհամաչափ է. ինտելեկտի ցուցանիշը գերազանցում է կրեատիվությանը: Ներկայիս կրթական համակարգը միտված է զարգացնելու հատկապես տրամաբանական մտածողությունը՝ անտեսելով ստեղծարարության խնդիրը:

5. Օժտված դեռահասներին բնորոշ են ստեղծարարության բարձր մակարդակը, մտածողության յուրօրինակությունը, ճկունությունը, հետաքրքրությունների լայն շրջանակը, անհանդուրժողականությունը, արդարամտությունը, նորը որոնելու ձգտումը, հումորի զգացումը, լիդերի որակները, դպրոցի հանդեպ դժգոհությունը, խնդիրներ ուսուցիչների հետ: Նրանց ինքնագնահատականը հիմնականում միջին շեմի վրա է:

6. Օժտված դեռահասներն ունեն հարմարման խնդիրներ դպրոցում, որոնք պայմանավորված են ինչպես նրանց անձնային, ինտելեկտուալ,

սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններով, այնպես էլ ուսուցիչների, հասակակիցների ոչ համարժեք վերաբերմունքով: Նրանք առանձնանում են բարձր տագնապայնությամբ և հուզական անհավասարակշռությամբ:

Հետազոտության արդյունքների հուսալիությունն ու հավաստիությունը ապահովված են առկա հիմնարար հետազոտությունների վերլուծությամբ և տեսական դրույթներով, որոնք կազմել են հետազոտության տեսամեթոդական հիմքը, աշխատանքի հիմնական նպատակներին և խնդիրներին համապատասխան հավաստի փորձարարական համալիր մեթոդների ընտրությամբ և կիրառմամբ, փորձարկվողների անհրաժեշտ թվաքանակի ընդգրկմամբ, ստացված արդյունքների հոգեբանական և մաթեմատիկական վերլուծությամբ:

Հետազոտության ընտրանքը: Հետազոտությունն անցկացվել է 2008թ. հունվարից մինչև 2011 թվականի դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում: Ընդգրկված են եղել 10-16 տարեկան 573 աշակերտներ և 12 արդեն իսկ կայացած ստեղծագործող անհատականություններ:

Աշխատանքի փորձարկումն ու հրապարակային քննարկումը: Հետազոտության արդյունքներն անցել են երկարատև գիտական և փորձարարական ճանապարհ: Դրանք քննարկվել են ԵՊՀ-ի ընդհանուր հոգեբանության ամբիոնի ընթացիկ նիստերում, փորձարարական հոգեբանության լաբորատորիայի նիստերում, ՀՀ և միջազգային գիտաժողովներում, Ա. Շիրակացու անվան ճեմարանի՝ երեխաների օժտվածության ուսումնասիրության լաբորատորիայում, ինչպես նաև երկօրյա քննարկում-սեմինարներ են անցկացվել ուսուցիչների հետ:

Աշխատանքի հիմնական դրույթները ներկայացված են տասը հրատարակություններում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գիտագործնական առաջարկներից, գրականության ցանկից և հավելվածից: Ներկայացված են 20 աղյուսակ, 15 նկար, որոնցից 12-ը՝ հիստոգրամի տեսքով: Ատենախոսությունը շարադրված է 179 տպագիր էջերի վրա: Օգտագործվել է 211 աղբյուր՝ հայերեն և օտար լեզուներով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված է աշխատանքի նպատակը, սահմանված են հետազոտության վարկածը, օբյեկտը, առարկան, ներկայացված են հետազոտության խնդիրները և տեսական գիտամեթոդաբանական հիմքերն ու մեթոդները: Բացահայտված է աշխատանքի տեսական և գիտական նշանակությունը, ինչպես նաև գիտական նորույթը, նշված են պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության **«ՕԺՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ»** խորագրով առաջին գլխում քննարկվել է օժտվածության էությունը:

Օժտվածությունը միշտ էլ գտնվել է գիտնականների ուշադրության կենտրոնում, ստացել բազմաբնույթ մեկնաբանություններ և սահմանումներ: Հարկ է նշել, որ օժտվածության բազմաթիվ հայեցակարգերի առկայությունն արտացոլում է դրա բարդ բնույթը: Օժտվածությունը համակարգված, կյանքի

ընթացքում զարգացող որակ է, որը որոշում է մարդու՝ բարձր արդյունքներ ձեռք բերելու հնարավորությունը մեկ կամ մի քանի գործունեության տեսակներում: Այն, որպես բազմասպեկտ և բազմամակարդակ երևույթ, դիտարկվում է ժամանակակից շատ հայեցակարգերում (Ֆ. Գագնե, Կ. Հելլեր, Է. Տորրենս): Աշխատանքում մենք ուսումնասիրում ենք ինտելեկտը և կրեատիվությունը՝ որպես օժտվածության բաղադրիչներ, իհարկե, շեշտը դնելով վերջինիս վրա՝ իբրև գլխավոր չափանիշի և կիրառելով կրեատիվ օժտված եզրույթը: Հավելենք՝ կրեատիվ օժտվածություն երևույթը ուսումնասիրվել է Կ. Թեյլորի կողմից: Կրեատիվությունը պետք է հասկանալ օժտվածության իրագործման միջոցներից մեկը:

«**Կրեատիվություն հասկացության մեկնաբանությունը հոգեբանության մեջ»** ենթագլխում վերլուծում ենք կրեատիվության էությունը, դրա վերաբերյալ տարբեր հեղինակների մոտեցումները և հայեցակարգերը (Ջ. Գիլֆորդ, Է. Տորրենս, Մ. Վոլլախ, Ն. Կոգան, Ս. Մեդնիկ, Ռ. Ստերնբերգ, Վ. Դրուժինին, Լ. Թերստոուն, Է Լանդաու, Տ. Գալկինա, Լ. Խուսնուտդինա, Գ. Գլոտովա, Ֆ. Վիլյամս), կրեատիվ անձի առանձնահատկությունները, ժառանգականության և միջավայրի ազդեցությունը կրեատիվության զարգացման վրա, ինտելեկտի և կրեատիվության փոխհարաբերությունը, ինչպես նաև ախտորոշումը: Հետաքրքիր է, որ ինտելեկտի գործակիցը, որը երկար տասնամյակներ եղել է օժտվածության գնահատման միակ չափանիշը, կասկածի տակ է դրվել Հ. Գարդների, Ռ. Ստերնբերգի և Կ. Ֆելդմանի հետազոտությունների արդյունքում: Այն, նրանց իսկ պնդմամբ, շատ սահմանափակ է, որպեսզի ներառի տաղանդի և օժտվածության բազմակողմանիությունը, մինչդեռ կրեատիվությունը դիտարկվում է որպես առանձնահատուկ, այլ ոչ թե ընդհանուր գործոն: Հավելենք Ա.Սավենկովի այն դիտարկումը, որ Պ. Տորրենսն առաջիններից մեկն էր, ով առաջարկեց օժտվածության գնահատման դեպքում հաշվի առնել ոչ միայն ինտելեկտի, այլև կրեատիվության մակարդակը: Առանձնակի կարևոր է Վ. Դրուժինինի մոտեցումը, ով կրեատիվությունը դիտարկում է որպես օժտվածության հարաբերականորեն անկախ գործոն: Չվիճարկելով սույն մոտեցումը՝ մենք ևս այն դիտարկում ենք թե' իբրև օժտվածության անկախ գործոն, թե' բաղադրիչ:

«Օժտվածության դրսևորման օրինաչափությունները անձի հարմարման գործընթացում» երկրորդ ենթագլխում քննարկում ենք հարմարման վերաբերյալ տարբեր հեղինակների մոտեցումները (Լ. Ֆիլիպս, Հ. Հարտման, Ա. Նալչաջյան, Տ. Պասոխով, Ֆ. Բերյոզին, Վ. Կագան), ինչպես նաև վերլուծում ենք օժտվածների հարմարման խնդիրները (Լ. Հոլինգուրտ, Լ. Պոպովա, Վ. Պանով, Վ. Յուրկևիչ, Գ. Լիդսեյ, Կ. Հոլ, Ռ. Տոմպսոն, Կ. Տեկեկս, Ա. Մատյուշկին, Ա.Սավենկով, Ե. Շեբլանով, Ս. Մաքսիմովա): Օժտված դեռահասների կրեատիվության դրսևորման և միջավայրին հարմարվելու օրինաչափությունները բավականին բարդ են և դեռևս ամբողջությամբ ուսումնասիրված չեն: Դպրոցական դեզադապտացիան բարդ սոցիալ-անձնային երևույթ է, որը դպրոցականի անձի և միջավայրի խաթարված փոխհարաբերությունների արդյունք է: Հիմնական պատճառներն են՝ դպրոցում ոչ հումանիստական շփման բնույթը, ուսուցչի անհատական ոճի առանձնահատկությունները, նրա անձնային որակները և բացասական դիրքորոշումը աշակերտների հանդեպ, դասարանում միջանձնային փոխհարաբերությունների առանձնահատկությունները, դասավանդման ցածր մեթոդական մակարդակը: Հենց այս համատեքստում էլ առավել ցայտուն են

դրսևորվում օժտվածների հարմարման խնդիրները: Դպրոցում նրանց սոցիալական դեզադապտացիայի պատճառ կարող է լինել խմբին միավորվելու և ընդունվելու ցանկությունը (ինքնանույնականացման պահանջ): Իսկ օժտված դեռահասների մոտ այդ պահանջմունքի բավարարումը կապվում է նրանց մոտ առկա ընդունակությունների հետ, որոնցով կարելի է զարմացնել հասակակիցներին: Օժտված լինելով լավ հիշողությամբ, վառ երևակայությամբ, հարուստ բառապաշարով և սուր հումորի զգացումով՝ նրանք, անկասկած, ցուցադրում են իրենց գերազանցությունը՝ դրա հետևանքով բախվելով հասակակիցների կողմից չհասկացված լինելու խնդրին:

«Օժտվածության զարգացման միտումները եզակի դեպքերի վերլուծության օրինակով» երկրորդ ենթագլխի առաջին կետում ուսումնասիրել ենք (ինչպես անցյալ, այնպես էլ ներկա) հանրահայտ մարդկանց կենսագրականները՝ իբրև հարմարման դժվարությունների լավագույն ապացույց: Հանրահայտ մարդկանց կյանքի փորձը, կենսագրականը նոր լույս են սփռում օժտվածություն հասկացության վրա: Մեր կողմից ուսումնասիրված անձինք (իհարկե, սահմանափակ թվաքանակով՝ 12) տարբեր բնագավառներում արդեն իսկ կայացած ստեղծագործող անհատականություններ են, ովքեր իրենց խոսքն են ասել արվեստի, գիտության, մշակույթի, սպորտի ասպարեզում: Ժամանակակից օժտված անձինք ընտրվել են փորձագիտական հարցման միջոցով: Փորձագիտական խմբում (7 հոգի) ներգրավվել են գիտության դոկտորներ, թեկնածուներ, արվեստագետներ, որոնց ուղղված են եղել հետևյալ հարցերը՝ ըստ Ձեզ կա՞ն արդյոք մեր ժամանակներում օժտված անձինք, և որո՞նք են Ձեզ համար նրանց օժտված դիտարկելու չափանիշները: Ամփոփելով փորձագետների մատնանշած չափանիշները՝ մասնագիտական նվաճումները, միջազգային ճանաչումը, կոչումները, մրցանակները, կազմեցինք ուսումնասիրվող անձանց շարքը (Վան Խաչատուր, Հենրիկ Էդոյան, Յակով Զարգարյան, Գեորգի Հարությունյան, Սուրեն Պողոսյան, Սմբատ Լպուտյան, Էլդա Գրին, Դավիթ Սեդրակյան, Էդգար Գյանջումյան, Ալվարդ Պետրոսյան, Արմեն Էլբակյան, Էդվարդ Ղազարյան): Այս դեպքում կիրառել ենք զրույցի մեթոդը՝ նախապես կազմված հարցերի միջոցով:

Եզակի դեպքերի վերլուծության համար հիմք ենք ընդունել Կ. Յունգի հետևյալ տեսակետը՝ օժտված երեխան իրականում բարդ խնդրի առաջ է կանգնեցնում դպրոցին: Օժտված երեխայի մեջ դժվար է տեսնել լավ աշակերտի: Անցյալ ժամանակների օժտվածների (Ե. Չարենց, Նապոլեոն, Կ. Յունգ, Վան Գոգ, Հ. Շիրազ, Մ. Մեծարենց, Պ. Դուրյան, Հ. Այվազովսկի, Հ. Աճառյան) վերլուծության համար կիրառել ենք կենսագրական մեթոդը, իսկ ընտրության չափանիշ են հանդիսացել օժտվածներին բնորոշ առանձնահատկությունները և խնդիրները: Այս ենթագլխում ամփոփում ենք նաև ժամանակակից հանրահայտ մարդկանց տեսակետները՝ փորձելով ցույց տալ ինչպես նրանց ընդհանրությունները, այնպես էլ տարբերությունները: Փաստենք, որ օժտվածությունը մեկնելու տեսակետները կիսվեցին: Դպրոցի հանդեպ վերաբերմունքով էլ էին նրանք առանձնանում, իսկ դա ևս օժտվածներին բնորոշ մի առանձնահատկություն է: Ակնառու է նրանցից ամեն մեկի հարմարման առանձնահատկությունը, յուրաքանչյուրինը յուրովի է, ինքնատիպ, իրենց՝ կյանքի ընթացքում ձևավորված բանաձևի նման, ինչն օգնում է պահպանել ինքնատիպությունը, եզակիությունը, բայց միևնույն

ժամանակ լինել հասարակության մասնիկ, մշակույթի, արվեստի, գիտության կերտող: Եվ դա է օժտվածի առաքելությունը. հաղթահարելով խոչընդոտները՝ հասնել բարձունքների և ծառայել հասարակությանը: Օժտված մարդկանց բնորոշ է ազատատենչությունը, սահմանների մեջ չտեղավորվելը, և, վերջապես, համարձակությունն է նրանց գոյության բանաձևը, ինչը ստեղծագործելու, արարելու համար նոր հորիզոններ է բացում:

Գալով ընդհանրություններին՝ պետք է ասենք, որ բոլորն էլ բախվել են շրջապատողների կողմից ճիշտ չընկալվելու խնդրին՝ մարդկային բարդ հարաբերությունների հորձանուտում պահպանելով իրենց անհատականությունը, ստեղծագործելու և արարելու առաքելությունը, ինչպես նաև լավատեսությունը ստեղծագործական մեծ ներուժ ունեցող հայ ազգի ապագայի հանդեպ: Վերջին հաշվով, մերօրյա հանրահայտ այս ստեղծագործողների ապրածն ու տեսածը, շրջապատող միջավայրի հետ պայքարն ու ընդվզումները, կյանքի նկատմամբ ունեցած դիրքորոշումները, արժեքների համակարգը հնարավորություն ընձեռեցին վավերացնելու օժտվածության վերաբերյալ առկա բոլոր տեսակետներն ու դրույթները՝ դրանով իսկ նրանց դարձնելով մեր աշխատանքի համար փորձագիտական խումբ:

Ելնելով տեսական մոտեցումներից և դրույթներից՝ մեր կողմից մշակվեց գիտահետազոտական աշխատանքների ռազմավարությունը, ըստ որի՝ շեշտադրվել են հետևյալ կետերը՝ բացահայտել օժտված դեռահասներին ուսումնական գործընթացում, դիտարկել կրեատիվությունը՝ որպես օժտվածության հիմնական բաղադրիչ և անձի համալիր որակ, ուսումնասիրել օժտված դեռահասների հարմարման առանձնահատկությունները՝ շեշտը դնելով ուսուցման գործընթացում ուսուցիչների և հասակակիցների հետ փոխհարաբերությունների վրա:

Ատենախոսության **«ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ»** խորագրով երկրորդ գլխում ներկայացված են հետազոտության փուլերը և մեթոդները:

Հետազոտության **առաջին փուլը** նվիրված է օժտված դեռահասների բացահայտմանը, այսինքն՝ դեռահասին՝որպես օժտվածի նույնականացնելու խնդրին:

Երկրորդ փուլում ուսումնասիրվում է բացահայտված օժտվածների դիվերգենտ մտածողությունը, ինքնագնահատականը, ինչպես նաև ծնողների և ուսուցիչների կարծիքը նրանց օժտվածության վերաբերյալ:

Երրորդ փուլում անդրադարձ է կատարվում օժտված դեռահասների հարմարման առանձնահատկություններին:

Հետազոտական աշխատանքներն անցկացրել ենք Ա. Շիրակացու անվան ճեմարանում, ք. Սևանի Խ. Աբովյանի ավագ և N1 հիմնական դպրոցներում: Հետազոտությանը մասնակցել է 573 սան:

Ատենախոսության «**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**» խորագրով երրորդ գլխում տեղ են գտել ողջ փորձարարական մասի տվյալներն ու դրանց վերլուծությունը:

«Օժտված դեռահասների բացահայտման հետազոտության արդյունքները և դրանց հոգեբանական վերլուծությունը» առաջին ենթագլխում ներկայացվում են օժտվածության բաղադրիչների՝ ինտելեկտի և կրեատիվության հետազոտության արդյունքները՝ սկզբում ըստ առանձին դպրոցների, այնուհետև՝ ընդհանուր տեսքով: Օժտվածության բացահայտման ուղղությամբ կատարված հետազոտություններին մասնակցել է 573 սան:

Դեռահասին՝ որպես օժտվածի նույնականացնելու համար մենք հիմք ենք ընդունում կրեատիվության բարձր մակարդակը՝ անմասն չթողնելով ինտելեկտի ցուցանիշը: Մեր ուսումնասիրությունների արդյունքում բարձր կրեատիվություն ունեն (նրանց ի սկզբանե դասել ենք ամենաբարձրերի շարքը) 31 սաներ, որոնց էլ համարում ենք հավանական օժտվածներ: Այսպիսով՝ կրեատիվ օժտվածների թիվը 31 է (5,5%), իսկ բարձր կրեատիվություն ունեցողներինը՝163 (28,5%): Ինտելեկտուալ օժտվածների թիվը 65 է (11,5%), բարձր ինտելեկտ ունեցողներինը՝ 230 (40%): Նշենք, որ ինտելեկտի և կրեատիվության միջև առկա է կոռելյացիոն ուժեղ կապ՝ r=0,87, P<0,001:

«Բացահայտված օժտված դեռահասների հետ կատարված աշխատանքների արդյունքների վերլուծությունը» երկրորդ ենթագլխում ներկայացվում են օժտված և բարձր կրեատիվություն ունեցող դեռահասների, նրանց ծնողների, ուսուցիչների հետ անցկացրած հետազոտության արդյունքները: Մասնակիցների ընդհանուր թիվը 205 է, տարիքը՝10-16: Արդյունքները սկզբում ներկայացվում են ընդհանրացված տեսքով, այնուհետև՝ ըստ առանձին գործոնների: Դիվերգենտ մտածողության թեստի (բացահայտում է չորս գործոն՝ արագություն, ճկունություն, յուրօրինակություն, մշակվածություն, ինչպես նաև վերբալ ընդունակություն) կիրառման արդյունքում ամենաբարձր արդյունքներ դրսևորել են 33 սան(16%), բարձր՝ 46-ը (22,5%), միջին՝19-ը (9,5%), միջինից ցածր՝107-ը (52%): Ստացված արդյունքները վկայում են, որ շատ ցածր ցուցանիշներ չկան, ինչը կարելի էր ենթադրել, քանզի ընդգրկված էին մեր իսկ կողմից առանձնացված դեռահասները:

Վիլյամսի թեստերի հավաքակազմի երկրորդ՝ անձի ստեղծագործական բնութագրերի հարցարանի շնորհիվ ստացված արդյունքները վկայում են, որ գերակշռող են միջին ցուցանիշներ ունեցողները: Որքան բարձր է ընդհանուր միավորը, այնքան ստեղծագործող, երևակայությամբ, ռիսկի գնալու ընդունակ և բարդ իրավիճակներում կողմնորոշվող է դեռահասը. բոլոր վերոնշյալ անձնային գործոնները սերտ կապված են ստեղծարարության հետ: Ուսուցիչների և ծնողների արդյունքները վերլուծելիս պարզվում է, որ ծնողների մոտ միտում կա գերագնահատելու իրենց երեխաների ընդունակությունները, ինչն օրինաչափ երևույթ է, իսկ ուսուցիչներից շատերը ոչ բոլորին էին համարում օժտված: Համահարաբերակցական (կոռելյացիոն) վերլուծությունը ցույց է տալիս, որ դիվերգենտ մտածողության և անձնային բնութագրերի միջև առկա է կապ՝ r=0,12, P<0,05, ինչպես նաև կապ է առկա դիվերգենտ մտածողության և ծնողների՝ r=0,27, P<0,01, անձնային բնութագրերի և ծնողների ցուցանիշների միջև՝ r=0,24, P<0,01: Կոռելյացիոն կապ է առկա յուրօրինակության և ճկունության r=0,40, յուրօրինակության և մշակվածության r=0,44, յուրօրինակության և անվանման միջև r=0,42 P<0,001: Արագության և յուրօրինակության միջև կոռելյացիոն կապը(r=0,41, P<0,001) վկայում է, որ որքան շատ են պատասխանները, այնքան դրանք յուրօրինակ են: Օժտված և ոչ օժտված դեռահասների ստեղծագործական մտածողության միջին ցուցանիշները համեմատելիս ստացվել է հետևյալ պատկերը:



Նկար 1. Օժտված և ոչ օժտված դեռահասների ստեղծագործական մտածողության միջին ցուցանիշների համեմատությունը

Այստեղ պարզ երևում են օժտված դեռահասների անհամեմատ բարձր ցուցանիշները, հատկապես տարբերությունը դրսևորվում է յուրօրինակության, մշակվածության, անվանման, ստեղծագործական մտածողության դեպքում:

Անդրադառնալով գործոններին՝ հարկ է նշել, **որ ճկունությունը** տարբեր մտքեր առաջադրելու ընդունակությունն է, որոնք տարբեր իմաստային դասերի են պատկանում: Ստեղծագործող անձինք հաճախ են գերադասում փոխել ինչ-որ բան. նրանց մտածողությունը շարժուն է: Մտածողության ճկունությունը վկայում է բացառիկության մասին, ինչն էլ բնորոշ է օժտվածներին: Նոր, անսպասելի գաղափարներ առաջադրելու ունակությունը մտածողության **յուրօրինակությունն է**: Այն դրսևորվում է մտածողության և վարքի մեջ, հասակակիցների և մեծերի հետ շփման գործընթացում, գործունեության բոլոր տեսակներում:

Սրանք, կարծում ենք, օժտվածներին ոչ օժտվածներից առանձնացնող այն էական որակներն են, որոնք անդրադառնում են հարմարման գործընթացի վրա՝ հաճախ դարձնելով նրանց վարքը միանգամայն անկանխատեսելի: Օժտված դեռահասների մոտ գերիշխող ստեղծագործական ներուժն էլ հենց որոշում է նրանց վարքի ոչ ստանդարտությունը, ընդհանուր կանոններին և հեղինակություններին չենթարկվելը:

Այս ենթագլխում ներկայացվում են նաև մեր իսկ կողմից բացահայտված այն օժտված դեռահասների բնութագրերը, որոնց առանձնահատկությունները ցայտուն են, խնդիրներն՝ ավելի տեսանելի՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ օժտվածությունը, կրեատիվությունն անձի ինտեգրալ որակ է: Բնութագրումները և դիտարկումները ցույց տվեցին, որ կրեատիվ օժտված

դեռահասներն ունեն հարմարման խնդիրներ: Դրանք կարող են վերաբերել ուսումնական գործընթացին, հասակակիցների և ուսուցիչների հետ հարաբերություններին: Մեր դիտարկումներից ելնելով՝ հանգում ենք հետևյալին՝ դեռահասներին բնորոշ առանձնահատկությունները առկա են նաև ինչպես անցյալ, այնպես էլ ներկա ժամանակների օժտվածների մոտ: Եզրակացությունը մեկն է՝ հետազոտված երեք խմբերն էլ՝ օժտվածության իրենց տարաբնույթ դրսևորումներով, ամրագրում են ինչպես ուսումնասիրվող գրականության տեսական դրույթները, այնպես էլ վավերացնում են մեր փորձարարական տվյալները:

«Օժտված դեռահասների հարմարման հետազոտության արդյունքների վերլուծությունը» երրորդ ենթագլխում ներկայացվում են կրեատիվ օժտված դեռահասների հարմարման առանձնահատկությունների, տագնապայնության, վարքի հետազոտության արդյունքները:



Ծանոթագրություն *1 - հարմարում, 2 - ապահարմարում:*

Նկար 2. Կրեատիվ օժտված դեռահասների հարմարման արդյունքները (n=33)

Հետազոտության փաստերը ցույց տվեցին, որ կրեատիվ օժտվածների հարմարման առանձնահատկությունները բազմազան են, որոշ դեպքերում՝ օրինաչափ: Այսպիսով՝ կրեատիվ օժտված սաներից միայն 9-ի (27 %) մոտ է առկա ադապտացիայի բարձր ցուցանիշ: 24 (73%) -ի մոտ բարձր են դեզադապտացիայի ցուցանիշները: Սակայն պետք է արձանագրենք, որ այդ 9 սաների մոտ եթե նույնիսկ բարձր է ադապտացիայի ցուցանիշը, ապա միանշանակ չի կարելի ասել, որ նրանց հարմարման գործընթացը չունի խոչընդոտներ: Ասվածի լավագույն ապացույցն այն է, որ բարձր են լինում կա'մ հուզական անհավասարակշռության, կա'մ ուրիշների հետ կոնֆլիկտի ցուցանիշների արդյունքները: Տագնապայնության ուսումնասիրության

արդյունքում ակնհայտ է դառնում, որ նորմայից բարձր տագնապայնություն ունի 16 (48,5%) կրեատիվ օժտված դեռահաս, բարձր՝14-ը (42,5%), իսկ երեքի մոտ (9%) տագնապայնությունը բարձր չէ: Սոցիալական սթրեսի ապրումը բարձր է 23 (70%) սանի մոտ, իսկ հաջողության հասնելու պահանջմունքի ֆրուստրացիան՝ 26-ի (79 %): Օժտված դեռահասների մոտ առկա բարձր տագնապայնությունը, կարծում ենք, պայմանավորված է նաև ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների համակարգում առաջացող հոգեբանական դժվարությունների հատուկ բնույթով: Պետք է նկատի ունենալ, որ բարձր տագնապայնության առաջացումը կարող է լուրջ պատճառ լինել ինտելեկտուալ և ստեղծագործական զարգացման ցուցանիշների նվազման համար, հանգեցնել այսպես կոչված «օժտվածության կորստի»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դեռահասության տարիքում օժտվածության դրսևորման օրինաչափություններին ուղղված մեր ուսումնասիրությունները և հետազոտությունները թույլ են տալիս հանգել հետևյալ եզրակացությունների՝

1. Օժտված դեռահասները համեմատաբար սահմանափակ թիվ են կազմում, ինչը մեկ անգամ ևս ապացուցում է, որ օժտվածությունն այսօր էլ չունի մասսայական բնույթ, այն շատ հաճախ չի դրսևորվում դեռահասի ուսումնական գործունեության ընթացքում, քանի որ ենթադրում է ինքնատիպություն, յուրօրինակություն, նորը ասելու համարձակություն:

2.Օժտվածությունը, լինելով անկրկնելի իր անձնային դրսևորումներում, անդրադառնում է անձի սոցիալ-հոգեբանական հարմարման գործընթացի վրա՝ դարձնելով այն բարդ և բազմագործոն: Հանրահայտ մարդկանց կենսագրական տեղեկությունները փաստում են նրանց մեծամասնության հարմարման խնդիրներ ունենալը: Ոմանք իրենց առանձնահատկությունների շնորհիվ հեշտ են հաղթահարում հարմարման խնդիրները, ոմանք՝ առավել դժվար: Նրանց բնորոշ չէ կանոններին և վարքի նորմերին ուղղակի հետևելը: Օժտվածությունն իր դրսևորման օրինաչափություններով թե' նախկինում, թե' այսօր ունի միևնույն նկարագիրը: Առանց բացառության, բոլոր օժտվածներն էլ իրենց անկրկնելիության և եզակիության հետ մեկտեղ ունեն ինչպես հարմարման, այնպես էլ միջավայրի կողմից չընդունվելու խնդիրներ:

3. Օժտվածությունը միշտ չէ, որ նկատվում և բացահայտվում է ուսուցիչների կողմից՝ պայմանավորված դրա մասին սխալ պատկերացում ունենալու հանգամանքով (օժտվածության նույնացումը ուսման առաջադիմության հետ): Որոշ ուսուցիչներ համարժեք պատկերացում չունեն օժտվածության մասին, ինչի արդյունքում այդպիսի դեռահասները մնում են աննկատ, նրանց ստեղծագործական ակտիվությունն ընկալվում է բացասաբար, և, ի վերջո, այն կա'մ մարում է, կա'մ ձեռք բերում հակասոցիալական բնույթ:

4. Դեռահասների մեծամասնության մոտ կրեատիվության ցուցանիշների համեմատությամբ ավելի բարձր են ինտելեկտի ցուցանիշները: Կրեատիվության ցածր ցուցանիշներ ունեցողների թվաքանակի գերակշռությունը վկայում է կրթական համակարգի ազդեցության մասին, որն առայժմ շեշտը դնում է տրամաբանական մտածողության վրա՝ անտեսելով ստեղծարարության զարգացումը , և միտված է միջին աշակերտին:

5. Օժտված դեռահասները, ի տարբերություն ոչ օժտվածների, առանձնանում են ստեղծագործական մտածողության կարևորագույն որակների՝ յուրօրինակության, ճկունության, մշակվածության բարձր ցուցանիշներով: Անդրադառնալով հարմարման գործընթացի վրա՝ դրանք հաճախ նրանց վարքը դարձնում են միանգամայն անկանխատեսելի: Օժտված դեռահասների մոտ գերիշխող ստեղծագործական ներուժն էլ որոշում է նրանց վարքի ոչ ստանդարտությունը, ընդհանուր կանոններին և հեղինակություններին չենթարկվելը, իսկ ժամանակակից կրթության ավանդական համակարգը հաճախ խոչընդոտում է նրանց ստեղծագործական ակտիվությունը, որն էլ հանգեցնում է դպրոցական, իսկ հետագայում էլ՝ սոցիալական ապահարմարման: Օժտված դեռահասների շրջանում մեծամասնություն են կազմում ստեղծագործական ընդունակությունների ինքնագնահատման միջին ցուցանիշներ ունեցողները: Օժտված դեռահասներին հիմնականում բնորոշ են ստեղծարարության բարձր մակարդակը, մտածողության յուրօրինակությունը, ճկունությունը, հետաքրքրությունների լայն շրջանակը, անհանդուրժողականությունը, արդարամտությունը, նորը որոնելու ձգտումը, հումորի զգացում, լիդերի որակները, դպրոցի հանդեպ դժգոհությունը, ուսուցիչների հետ խնդիրները:

6. Օժտված դեռահասներին բնորոշ են դեզադապտացիայի (ապահարմարման) բարձր ցուցանիշներ: Հարմարման խնդիրները հիմնականում վերաբերում են ուսումնական գործընթացին, հասակակիցների և ուսուցիչների հետ հարաբերություններին: Օժտվածությունը, լինելով մեծագույն արժեք, հասարակական-պատմական առաջընթացի և յուրաքանչյուր անձի զարգացման շարժիչ ուժ, ունի անձնային և վարքային տարաբնույթ դրսևորումներ, որոնք էլ կարող են արժեզրկել արտակարգ ընդունակությունները, խաթարել փոխհարաբերությունները, սահմանափակել սոցիալական հարմարման հնարավորությունները: Օժտված դեռահասների մեծամասնությանը բնորոշ է տագնապայնության բարձր մակարդակ, ինչը հիմնականում պայմանավորված է ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների համակարգում առաջացող հոգեբանական դժվարությունների հատուկ բնույթով: Նրանց հարմարման գործընթացի վրա ազդում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոններ: Ներքին գործոնները կրեատիվ օժտված դեռահասներին բնորոշ անհատական-հոգեբանական առանձնահատկություններն են, որոնց վրա արտաքին գործոնների ճիշտ ազդեցությունն էլ կհանգեցնի նրանց ստեղծագործական ներուժի իրագործմանը, կնպաստի արդյունավետ հարմարմանը, քանի որ օժտվածության զարգացումը չի կարող դիտարկվել զարգացող անձի՝ սոցիալական միջավայրի փոխազդեցությունից դուրս:

Այսպիսով՝ օժտվածությունը, ունենալով միանման օրինաչափություններ, անկրկնելի է անձնային դրսևորումներում, ինչը մի կողմից առանձնացնում է անձը շրջապատողներից, մյուս կողմից դժվարացնում նրա հարմարումը հասարակության մեջ, որն առավել ցայտուն դրսևորվում է դեռահասության տարիքում: Ի վերջո, մեծահասակներն այսպես թե այնպես գտնում են իրենց հարմարման ձևը. ոմանք մեկուսանում կամ նեղացնում են իրենց շփման շրջանակը, ոմանք էլ ընտրում են ընդդիմանալը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ հրապարակումներում.

1. Պողոսյան Ս. Հ., Օժտվածության երևույթը Յունգի մեկնաբանություններում, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, Ասողիկ, 2008, N 1(34), էջ 171-176:
2. Պողոսյան Ս.Հ., Ընդունակությունների զարգացման գործոնները, Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, Երևան, 2008, 1, էջ 53-58:
3. Պողոսյան Ս.Հ., Օժտվածության բացահայտման հիմնախնդրի որոշ հարցեր, Գիտաժողովի նյութեր, Երևան, ԵՊՀ, 2008, էջ 50-53:
4. Պողոսյան Ս.Հ., Հարությունյան Հ. Ս., Կրեատիվության խնդիրն ու նշանակությունը ուսումնական գործընթացում, Նախաշավիղ, գիտամեթոդական հանդես, Երևան, 2008,2-3, էջ 98-107:
5. Պողոսյան Ս. Հ., Օժտվածության հոգեդիագնոստիկայի նորօրյա խնդիրները, «Անձի զարգացման հիմնախնդիրները» միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, ԵՊՀ, 2009, էջ 156-159:
6. Պողոսյան Ս. Հ., Ստեղծագործականությունը՝ ուսումնական գործընթացի կարևոր պայման, Նախաշավիղ, գիտամեթոդական հանդես, Երևան, 2009,3-4, էջ 103-106:
7. Պողոսյան Ս.Հ., Ինտելեկտը՝ որպես օժտվածության չափանիշ, Հոգեբանությունը և կյանքը, Զանգակ-97, 2009, N3-4, էջ 31-41:
8. Պողոսյան Ս.Հ., Կրեատիվ օժտված դեռահասների հարմարման առանձնահատկությունները, Հոգեբանությունը և կյանքը, Զանգակ-97, 2011, N1-2, էջ 8-14:
9. Պողոսյան Ս. Հ., Կրեատիվությունը՝ որպես օժտվածության չափանիշ, Հանրային կառավարում, Գիտական հանդես, Միջբուհական գիտաժողովի նյութերի ժողովածու, 2014, N3-4, էջ 336-341:
10. Погосян С. Г., Психологическое исследование одаренных подростков, Прорывные экономические реформы в условиях риска и неопределенности: сборник статей Межд. Научно-практ. Конференции, Уфа: Аетерна, 2015 г., с. 253-258.

ПОГОСЯН СОНА ГРАЙРОВНА

ЗАКОНОМЕРНОСТИ ПРОЯВЛЕНИЯ КРЕАТИВНОСТИ В УЧЕБНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ПОДРОСТКА

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01. „Общая психология, теория и история психологии, психология личности″

Защита диссертации состоится 29 сентября 2015 года в 12.00 ч. на заседании специализированного совета по философии и психологии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: Ереван, 0010 , ул. Тигран Мец, 17.

РЕЗЮМЕ

Актуальность диссертационного исследования обусловлена тем, что проблема одаренности важна как для психологии как науки, так и для общества в целом. Интеллект и креативность являются национальными ценностями. Выявление и развитие одаренных детей особо актуально для нашей страны, где нет мощной экономики и умственный потенциал мигрирует за границу. Забота об одаренных подростках сегодня - это будущее развитие науки, культуры и социальной жизни.

Цель исследования:

Выявить общие закономерности проявления одаренности, индивидуальные особенности и их воздействие на адаптацию в подростковом возрасте.

Основные задачи исследования:

1. Проанализировать креативность как критерий одаренности и психологические закономерности ее проявления.
2. Выявить связь креативности и адаптации в процессе жизнедеятельности выдающихся людей.
3. Выявить одаренных подростков, исследуя их креативность, интеллект, личностные особенности.
4. Исследовать адаптацию, тревожность, а также особенности общения и поведения одаренных подростков.
5. Выявить и проанализировать закономерности проявления одаренности подростков и их адаптационные возможности.

Гипотеза исследования.

Одаренность, имея общие закономерности развития, одновременно уникальна в личностном проявлении. Поскольку креативность является главным критерием одаренности, именно она дистанцирует личность от окружающей среды и влияет на механизмы социально-психологической адаптации, создавая разнообразные проблемы в подростковом возрасте.

Научная новизна исследования.

1. Выделены критерии исследования одаренности: интеллект, креативность, личностные особенности.
2. Выявлены креативно одаренные подростки и исследованы особенности их адаптации в среде развития.
3. Выявлено, что высокий уровень креативности как главный критерий одаренности создает препятствия в процессе адаптации одаренных подростков.
4. Выявлено, что закономерности проявления одаренности и в прошлом, и в настоящем имеют ту же характеристику.
5. Систематизированы особенности одаренных подростков и проблемы, с которыми сталкиваются в учебном процессе. Рассмотрение подобных проблем на ранней стадии их возникновения может создать возможность устранения факторов, препятствующих развитию одаренных подростков.
6. Указаны пути выявления одаренных подростков и подготовки учителей, работающих с одаренными подростками.

Теоретическая и практическая значимость исследования.

Данные, полученные в результате проведенного нами исследования, уточняют и расширяют научные представления о психологических особенностях и проблемах одаренных людей в подростковом возрасте.

Практическая значимость исследования состоит в том, что выделенные критерии и методы могут быть использованы при идентификации и выявлении одаренных подростков. Экспериментальные данные об особенностях и трудностях адаптации одаренных подростков, которые возникают во взаимодействии школьник-учитель, могут использоваться в школьных психологических службах. Полученные данные дают возможность осуществления коррекционных работ в процессе обучения.

Достоверность результатов.

Достоверность результатов обусловлена методологической обоснованностью, соответствием цели, гипотезы и задач, а также использованными методами. Теоретические положения и выводы работы получены на основе досконального научного анализа, богатым экспериментальными данными и их статистической обработкой.

Апробация и внедрение результатов исследования.

Результаты исследования обсуждались на заседаниях кафедры общей психологии и лаборатории экспериментальной психологии ЕГУ, на конференциях, в лаборатории исследования одаренности детей лицея им. А.Ширакаци, а так же проводились двухдневные семинары с учителями.

По теме диссертации опубликовано 10 статей.

Структура работы.

Диссертация состоит из введения, трех глав, выводов, списка литературы и приложений. Объем работы составляет 179 страниц. Он включает 20 схемы, 15 рисунков, из которых 12 в виде гистограммы, а также 211 источников литературы.

POGHOSYAN SONA

REGULARITIES OF MANIFESTATION OF CREATIVITY IN THE LEARNING PROCESS OF A TEENAGER

Dissertation for pursuing a degree of candidate of psychological sciences in speciality 19.00.01 “General Psychology, Theory and History of Psychology, Individual Psychology”.

The defence of the thesis will take place at 12.00 on september 29 th, 2015 at the session of Degree Awarding ommission 064 specializing in Philosophy and Psychology of the Higher Attestation Committee of the Republic of Armenia at Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan.

Address: Tigran Mets street, 17, Yerevan, Republic of Armenia

SUMMARY

Actuality.

The relevance of the dissertation research is conditioned by the fact that the problem of endowments is important both for psychology as a science and for society as a whole. Intelligence and creativity are national values. Identification and development of the gifted ones is especially urgent for our country since it does not have a powerful economy and there is a migration of intellectual potential from the country. The care of gifted children today is the future development of the science, culture and social life of the country.

Objective of the research.

Is to reveal the general regularities of manifestation of endowments, individual peculiarities and their impact on adaptation at teenage age.

Main goals of the research are:

1. To analyze creativity as a criteria of endowments and psychological regularities of manifestation of endowments.
2. To detect the connection between creativity and adaptation on an example of outstanding people.
3. To reveal gifted people through investigation of their creativity, intelligence and personal characteristics.
4. To investigate adaptation, uneasiness, and also features of communication and behavior of the gifted teenagers.
5. To identify and analyze regularities of manifestation of endowments of teenagers and their adaptation potential.

Hypothesis of the research.

Endowments, having general regularities of development, is unique in personal manifestation. Creativity is the main criterion that separates the personality from the environment, influences mechanisms of social psychological adaptation and generates various problems at teenage age.

Scientific novelty of the research.

1. The criteria of the study of giftedness: intelligence, creativity, personality traits were allocated.

2. The gifted teenagers were identified and the features of their adaptation in the environment of their development were studied.

It was revealed that a high level of creativity, as the main criteria for giftedness, creates obstacles in the process of adaptation of gifted teenagers.

4. It was revealed that the regularities of manifestation of giftedness in the past and nowadays have the same characteristics.

5. Creatively gifted teenagers and their problems in the learning process were revealed. Early study of the problems can give a chance to eliminate the factors, which may be obstacles in development of the gifted ones.

6. The ways (methods) of identification of gifted teenagers and the trainings for teachers, working with gifted adolescents were indicated.

Theoretical and practical significance of the research.

The data obtained during the research specify and expand scientific ideas on psychological features and problems of gifted people at teenage age.

The practical importance is that the allocated criteria and methods can be used for identification of gifted teenagers. Experimental data on features and difficulties of adaptation which arise during the interaction of school students and teachers can be used in school psychological services. The obtained data gives an opportunity for implementation of correctional work in the learning process.

Credibility of results.

Reliability of the results is conditioned by the methodological validity and compliance of the purpose, the hypothesis and the tasks as well as by the methods used. Theoretical provisions and conclusions of the work are received on the basis of the thorough analysis of scientific sources and experimental research data.

Approbation and adoption of the research results.

The results of the research were discussed at meetings of the department of the General psychology and laboratory of experimental psychology of YSU, in the conferences, in the laboratory of research of endowments of children in the lyceum after A.Shirakatsi, two-day seminars were held with teachers.

Ten articles have been published on the subject of the thesis.

Structure of the thesis.

The thesis consists of the introduction, three chapters, conclusions, the list of references and appendices. The volume of work makes 179 pages. It includes 20 schemes, 15 drawings, 12 of them as a histogram, and 211 sources of literature.